

ՖԱՐՀԱԴ ԵՒ ՇԻՐԻՆ^{*)}

(Պարսիկ պօէմա—դէրվիշի պատմած)

1.

Քեզ, իմ անգին էակ, քեզ եմ նուիրում Ֆարհադ—
Շիրինի գողտրիկ այս զրոյց:

Վառ Արևելքի սէրն է նրան ծնել Շիրազի հովտի
ջրերն ուռճացրել, վարդենինների բուրմունքն օրօրել:

Անցել—բայլել է դարերի գլխով, անմոռնուկ ծաղ-
կի հրապոյրն ունի, սիրածդ գեփիւռի մրմունջը տար-
փոտ, և գիտէ խօսել թէ ջերմ սրտերի, թէ մեծ մըտ-
քերի:

Քեզ եմ նուիրում այրուած սրտերի այս խորունկ
վէպը, հանած հնութեան անյատակ ծովից՝ որպէս մար-
գարիտ: Որպէս մի հին գիրք, որի էջերը լի իմաստու-
թեամբ՝ գիտեն դեռ յուզել, գիտեն ջերմացնել:

Քեզ եմ նուիրում նոյնքան մեծ սիրով, որքան Ֆար-
հադը սիրեց, որոնեց, ընկաւ... և ընկած տեղը նոնե-
նին բուսաւ:

2.

Եւ գիտէր սիրել Ֆարհադը Շիրինին: Սիրել այն

¹⁾ Այս պօէման իբր հիմք ունի պարսկական յայտնի «Ֆարհադ-Շիրին կամ Էնարը Փարհադ» (Ֆարհադի նուռը) զրոյցը: Պօէման կարգալիս՝ անհրաժեշտ է յատկապէս ուշք դարձնել թէ շեշտերին և թէ կէտադրութեան: Ծ. Հ.

սիրով, որ չէ մեղկացնում, այլ ոգևորում է, որ սողունի մէջքին անգամ թևեր բուսցընում:

Եւ գիտէր սիրել Փարհազը Շիրինին: Սիրել այն սիրով, որ աչքը գետնից՝ ամպերին ձգում, ժայռեր է հայցնում, ճահիճների տեղ՝ վարդեր աճեցնում, անապատի մէջ՝ փշեր տրորում, արեան շիթերով՝ հողը բեղմնաւորում:

Եւ գիտէր սիրել Փարհատը Շիրինին: Սիրել այն սիրով, որ կանգ չէ առնում ոչնչի առաջ, որ չէ խոնարհւում, կծկւում, ստրկանում, այլ որ ներշնչում է, ճղճիմ թզուկին հակայի փոխում:

3.

Գեղեցիկ էր Շիրազի հովտի չքնաղ Շիրինը: Գեղեցիկ—որքան գիտէ ստեղծագործել վառ Արևելքի երազող միտքը, ճոխ երևակայութիւնը:

Գեղեցիկ—որքան կարող է անըջել սիրային տենչը, բանաստեղծական խանդավառ սիրտը:

Գեղեցիկ—որքան Շիրազի նորածիլ վարդի թարմ կոկոնը, սոխակի երգին բացուող թերթերունքները:

Շիրազը չունէր մի ուրիշ Շիրին: Նա էր Իրանի սիրոյ աստուածուհին, նիւթ եղած՝ բանաստեղծների կրքոտ երգերին:

Փարհազը պաշտում էր Շիրինին: Շիրինը սիրում—մի՛միայն Փարհազին:

Երջանիկ էին, սիրով օրօրուն, կենսալից ու ջերմ, զիմազրաւ վշտի, ծաղրող—արհամարհող՝ չար ոգիների, ամէն տառապանքի:

4.

—Պօսիր իմ Շիրին. ասա, զրդէր ինձ, գործել եմ ուզում: Սէրն է սրտումս—նրա կայծերը երկինքն են ձգտում, որս են որոնում:

Ասա, կ'ուզեմ այդ գոռ լեռները հարթեմ—դաշտ շի-

նեմ: անապատի մէջ՝ դրախտ կառուցանեմ, աւերիչ գետի հոսանքը դարձնեմ, չար ոգիներին ճզմեմ-հալածեմ; աշխարհը մի՛ միայն սիրոյ, բարութեան մի հովտի փոխեմ... խօսիր, իմ Շիրին...

Եւ Շիրինը խօսեց:

Խօսեց Շիրինը և իր Ֆարհադին մեծ գործի մղեց: Ուզեց, յերաւի, Իրանն ու Թուրանը երջանիկ տեսնել, ազատ չարիքից, ազատ վշտերից, դառն արցունքներից: Ուզեց որ իր շուրջը սէրը միայն թագաւորի—անսահման սէրը, բարիք սնուցանող, ժպիտ, երգ ու կեանք...

—Նիր, իմ Ֆարհադ, սոսաց նա ժպտուն: Սիրոյ կայծերովդ տապաւորդ զինիր, այդ դաժան լեռան խորքերը մտիր. պեղիր, որոնիր, չար ոգիների ձեռքից Ջուլի-Շիրը ¹⁾ կորզիր—մարդկանց նուիրիր:

Թող բղիեն նրա ազնուացնող, չարիքը հալածող անմահ ջրերը. թող ոռոգէ նա վշտի դաշտը, փշերի տեղ՝ վարդենի բուսցնէ, ամէն մի տանջանք՝ ծիծաղի փոխէ և արցունքներին վերջ տայ—ժպիտը թագաւորէ:

5.

Ելաւ Ֆարհադը: Կորզեց տապաւորը, ջերմացրեց զինեց իր սիրող սրտի բոցոտ կրակով, կռացաւ—գգուեց չքնաղ Շիրինին, ամրացրեց գօտին, ճանապարհ ընկաւ, լեռների մթին խորքերը մտաւ, Ջուլի-Շիրը չար ոգիների ձեռքից խլելու իջաւ:

Բայց ինչո՞ւ յանկարծ սեղմուեց, մենակ մնացած Շիրինի սիրտը: Ինչո՞ւ կոկորդը դառնացաւ, մթագնից աչքը՝ կարծես չար ոգին էր այն, որ մօտ եկաւ նրա ականջին, փսփսաց, ասաց.

—Աւանդ, ո՞վ Շիրին, գնաց Ֆարհադը, գնաց յա-

¹⁾ Առասպելական մի գետ. հիւրի-փէրիների կեանք տուող, անմահացնող և զուարթութիւն ու կենսունակութիւն ներշնչող նեկտարի գետը՝ ըստ պարսկական առասպելների: Մ. Հ.

ւիտեանս։ Որոնոց սիրտը՝ մաքի է փոխուում, որոնոց սիրտը սիրտն է թառամեցնուում և կամ լայնացնուում— աշխարհն ամփոփուում, միակ Շիրինների մոռանուում-անցնուում, և կամ, յօշոտուում, ամբողջ արիւնովը՝ մարդկանց վշտերի մեծ զոհը դառնուում...

Ինչո՞ւ այդպէս սեղմուեց Շիրինի սիրտը, կոկորդը դառնացաւ, Շիրազի հովտի շքեղ այդ վարդը լացաւ, վշտացաւ...

6.

Գնաց Ֆարհադը, քայլեց ոգևորութեամբ, քայլեց շատ երկար։

Մտաւ լեռները, իջաւ անդունդներ, տապալեց ժայռեր և երկրի խորքում գետակը որոնեց, Ջուի-Շիրը աշխարհին նուիրել ճգնեց։

Չար ոգիները յուզուած, զայրացած գետը քաշեցին, խորքերը տարան, որոնոց հսկայի ջանքերը՝ ի դերև հանել մտածեցին։

Իսկ Ֆարհադը յամառ ու տոկուն, դանն տանջանքներով, երկար տքնութեամբ՝ պեղեց ու պեղեց, գոռ հարուածներով լեռները թո՛ւնդ հանեց, խաւարը հալածեց, ժայռերը փշրեց. որոնողութեան տենդով համակուած՝ ժամանակը մոռցաւ, տարիների գլխով ոստնեց ու անցաւ։

Հասաւ ակունքին. հասաւ, իրաւ է. բայց թէ երբ, ինչպէս— դա Աստուած գիտէ։

Ու երբ հասել էր—ոյժերը ժողովեց, մի յետին թափով նեկտարը թագցնող ժայռը գլորեց և դուրս ժայթքող փրփրադէզ գետակի երզը նա երզեց...

Երգեց խանդալից, երգեց աւիւնով...

7.

Չարմանք, ոգևորութիւն, շքեղ յաղթանակ—պահ մի մոռացրին և՛ սէր, և Շիրին։

Լոյսն էր ազատուող Պաւարի բանտից. լոյսն ու բարութիւն, աշխարհն ազնուացնող անմահ հեղուկը, որ դարեր ամբողջ կաշկանդուած—պրկուած, չար ոգիների շղթայով ճնշուած—սուկուն, շերմ սիրոյ մղմամբ ազատուած, ոստնում էր, ելնում, աշխարհին գնում:

Եւ հսկայ, երկար ջանքեր գործ դնող Փարհազը կուացաւ, Շիրինին յիշեց երազի նման. սոչորուած շրթունքը դրոշմել ուղեց կաթնահամ ջրի փայլուն շրթերին, որ ախտեղ—հեռու սպասող Շիրինը այդ համբոյրն առնէ, հրճուէ, ոգևորուի, վարդերի առաջ՝ յամառ, շերմ սրտի յաղթանակն երգի:

...Բայց ահա յանկարծ ջրերը յուզուեցին, ետ ընկրկեցին, փրփուր-դիզացան, սոսկումով անեղձերմակ բաշերը թօթուեցին արագ և Փարհազի ականջին, հեռու տեղերից, հասաւ քամու ձայն՝ տխուր, մահաշունչ.—

—Թշուառ որոնող, անբախտ իմաստուն. գնւ որոնում էիր՝ Շիրինը մոռացած, Ջուի—Շիրը պեղում՝ սէրդ կաշկանդած... Ու մինչ փնտռում էիր, տքնում, տառապում—Շիրինը ծիւրուած՝ տարիներ ամբողջ, նստած սպասեց և մեռաւ կարօտից ու «Փարհազ» կանչեց...

Ջրերը յուզուեցին, և բաշերը թօթուեցին, ետ ընկրկեցին...

Փարհազին թուեց՝ աշխարհը կործանուած, ժայռերը նորից-նոր՝ թաւալած—ընկած. լեռը կարծես դարձեալ փուլ եկաւ ծածկեց, կաթնահամ ջրին տարաւ—անհետացրեց:

8.

Յուսաբեկ, ընկճուած, նայեց Փարհազը ետ գնացող գետի փայլուն ջրերին. իր դէմքը. զննեց, տեսաւ կնճիռները, տեսաւ թէ ինչպէս սահող տարիները՝ ճիւնն էին բերել տառապող գլխին:

—Հասկացաւ այժմ, որ սահել—անցել էին տաս-

Նեակ տարիներ: Շիրինը մեռել էր յուսահատ՝ այնտեղ,
մինչ ինքը որոնել էր, տառապել՝ այստեղ:

Ու ելաւ հսկան, չուզեց այլևս ապրել:

Էլ ինչո՞ւ ապրել, որոնել, գիտնալ, լեռների խոր-
քից բարեքը դուրս կորզել—երբ ինքը, որոնողը և ո՛չ իսկ
նրա կաթիլին մօտենալ զօրեց՝ առանց դառն վշտի,
սպանիչ վշտի:

Շիրինը մեռել էր: Առանց Շիրինի կեանքը միտք
չունէր, առանց ջերմ սիրոյ՝ ապրելը չարժէր:

Սէքն է հասցնող մարդուս—բարձր աստղերի, սէ-
րը—թև տուող, ժայռերը փշրող, սէրը—վարդ բուսցնող,
բարիք սերմանող...

9.

...Թնդաց լեռ ու ձոր, մոնչեց՝ շուր, ծով. վառ
արշալոյսի տակ փայլեց Ֆարհադի՝ սիրոյ կայծերով զին-
ուած սուր տապար... և Ջուի-Շիրի շուրը արիւնով ներ-
կուեց, յուզուեց, ետ դնաց, լացաւ, ամօթով լցուած՝ խա-
ւարի կրծքի մէջը թագնուեց:

Տապարի կոթը մե՛ծ ու ժգնութեամբ վարսուեց գետ-
նի մէջ, Ֆարհադի արիւնը նրան ոռոգեց... և Շիրազի
հովտում, տարիներ յետոյ, բուսաւ մի մեծ ծառ՝ արիւ-
նոտ ծաղկով, արիւնոտ պտղով...

Նոնենին էր այն...

10.

Ու ծառն ամէն տարի, ո՛ւր որ էլ լինի—ունի պը-
տուղների մէջ մի հատը՝ կծկուած, որում երկու սիրտ
կայ՝ միմեանց միացած, խանձուած, տոչորուած...

Ֆարհադ—Շիրինի սրտերն են խամբած...

Վ. Փափազեան